ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/77

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.03.2021թ. թիվ 26/26-1/4419-2021 գրությամբ «ՍԱՆ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 18.03.2021թ. թիվ Ե/40/653-21 գրության հիման վրա 25.03.2021թ. թիվ 26/26-1/4419-2021 գրությամբ նախաձեռնել է «ՍԱՆ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«ՍԱՆ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ՍԱՆ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ի կողմից ՍՑ-ՆԳ-2021/77 ընթացակարգի շրջանակներում առարկություն է ներկայացվել 13.04.2021թ., որին Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն որոշման մեջ չի անդրադարձել հետևյալ հիմնավորմամբ.

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի 19-րդ կետի համաձայն՝ ***Անձը պարտավոր է որոշման մեջ*** հիմնավորված և պատճառաբանված ձևով ***անդրադառնալ բողոքարկման գործընթացի կողմերի՝ մինչև բողոքը բավարարելու կամ մերժելու մասին որոշում կայացնելու նպատակով հրավիրվող նիստի անցկացման մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրը ներառյալ*** ներկայացրած փաստաթղթերում, գրավոր դիրքորոշումներում, ներկայացված ապացույցներում ***բերված բոլոր փաստարկներին,*** տեղեկագրում և/կամ էլեկտրոնային գնումների համակարգում հրապարակված նյութերին:

Այսպիսով՝ «ՍԱՆ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ի կողմից առարկություն է ներկայացվել 13.04.2021թ., մինչդեռ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից սույն գործով որոշում կայացնելու նպատակով հրավիրվող նիստի անցկացման մասին հայտարարությունը www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) հրապարակվել է 09.04.2021թ., այսինքն՝ Ընկերության կողմից առարկությունը ներկայացվել է վերը նշված կարգավորմամբ սահմանված ժամկետից հետո:

«ՍԱՆ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/77 ընթացակարգի շրջանակներում 02.04.2021թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

Ընկերությունը 02.04.2021թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ միջնորդել է 2-3 օրով հետաձգել 02.04.2021թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստը՝ լիազորված անձի հիվանդության պատճառով:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/77 ընթացակարգի շրջանակներում 09.04.2021թ. ժամը 10:40-ին և 14.04.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, կրկին չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 18.03.2021թ. թիվ Ե/40/653-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-129/20» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Մալուխ»-ի ձեռքբերման նպատակով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ՍԱՆ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ի միջև կնքվել է թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-129/20-01/328» առ 19.01.2021թ. պայմանագիրը, 24 999 000 ՀՀ դրամ արժեքով:

Համաձայն պայմանագրի հավելված 1-ի՝ (Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց) «Մալուխի»-ի մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրը կնքելու օրվանից 40 օրացուցային օր, մինչև 01.03.2021թ.:

12.03.2021թ. դրությամբ «ՍԱՆ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրով սահմանված ապրանքների մատակարարում չի կատարվել, որի հետ կապված՝ առաջնորդվելով 19.01.2021թ. կնքված N «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-129/20-01/328» պայմանագրի 2.1.7 կետի պահանջներով, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն թիվ Ε/40/604-21 առ 12.03.2021թ. գրությունով միակողմանի լուծել է պայմանագիրը:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի պահանջներով, այն է՝ «խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, Ձեզ ենք ներկայացնում համապատասխան հիմքերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/77 ընթացակարգի շրջանակներում 02.04.2021թ. ժամը 09:40-ին, 09.04.2021թ. ժամը 10:40-ին և 14.04.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/77 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/77 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «ՍԱՆ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ի միջև 19.01.2021թ. կնքվել է «Մալուխ»-ի մատակարարման թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-129/20-01/328» ծածկագրով պայմանագիրը (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով,

ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված մալուխը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի N 1 հավելվածի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 4000 մետր մալուխի մատակարարման ժամկետ է սահմանվել Պայմանագիրը կնքելու օրվանից 40 օրացուցային օրը:

3. «ՍԱՆ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ին ուղղված 12.03.2021թ. թիվ Ε/40/604-21 ծանուցմամբ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-129/20» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Մալուխ»-ի ձեռքբերման նպատակով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ՍԱՆ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ի միջև կնքվել է թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-129/20-01/328» առ 19.01.2020թ. պայմանագիրը, որի համաձայն Ձեր ընկերությունը պարտավորվել է պայմանագրով սահմանված ժամկետներում մատակարարել համապատասխան մալուխը, որն առ այսօր չի իրականացվել:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7 կետը՝ հայտնում ենք, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն ստիպված է միակողմանի լուծել Պայմանագիրը և իրականացնել ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 16-րդ և 17-րդ ենթակետերով և «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-129/20» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի առաջին մասի 10-րդ բաժնով սահմանված գործառույթներ»:

4. Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 15.03.2021թ. և 24.03.2021թ. հրապարակվել են Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումներ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 25.03.2021թ. թիվ 26/26-1/4419-2021 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 18.03.2021թ. թիվ Ε/40/653-21 գրությունը՝ կից փաստաթղթերով և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ

և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «ՍԱՆ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ի միջև 19.01.2021թ. կնքվել է «Մալուխ»-ի մատակարարման թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-129/20-01/328» ծածկագրով պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված մալուխը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի N 1 հավելվածի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 4000 մետր մալուխի մատակարարման ժամկետ է սահմանվել Պայմանագիրը կնքելու օրվանից 40 օրացուցային օրը:

«ՍԱՆ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ին ուղղված 12.03.2021թ. թիվ Ե/40/604-21 ծանուցմամբ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-129/20» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Մալուխ»-ի ձեռքբերման նպատակով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ՍԱՆ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ի միջև կնքվել է թիվ ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-129/20-01/328 առ ***<u>19.01.2020թ. պայմանագիրը</u>***, որի համաձայն Ձեր ընկերությունը պարտավորվել է պայմանագրով սահմանված ժամկետներում մատակարարել համապատասխան մալուխը, որն առ այսօր չի իրականացվել:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7 կետը՝ հայտնում ենք, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն ստիպված է միակողմանի լուծել Պայմանագիրը և իրականացնել ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 16-րդ և 17-րդ ենթակետերով և «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-129/20» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի առաջին մասի 10-րդ բաժնով սահմանված գործառույթներ»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 15.03.2021թ. և 24.03.2021թ. հրապարակվել են Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումներ:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը</u>***:

Ուսումնասիրելով գործում առկա նյութերը՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 15.03.2021թ. և 24.03.2021թ. հրապարակված Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ 12.03.2021թ. թիվ Ε/40/604-21 ծանուցման համաձայն՝ միակողմանի լուծվել է թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-129/20-01/328» առ 19.01.2020թ. պայմանագիրը, մինչդեռ սույն ընթացակարգի նախաձեռնման համար Պատվիրատուի կողմից որպես հիմնավորում ներկայացվել է 19.01.2021թ. կնքված թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-129/20-01/328» ծածկագրով պայմանագրի շրջանակներում «ՍԱՆ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ի կողմից պարտականությունների չկատարումը:

Այսպիսով՝ գտնում եմ, որ 19.01.2020թ. կնքված թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-129/20-01/328» պայմանագրի լուծման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «ՍԱՆ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.03.2021թ. թիվ 26/26-1/4419-2021 գրությամբ «ՍԱՆ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**